

<Առջևում ՏԻՄ ընտրություններն են>, <Ազատ Արցախ>, առ 17.08.2013թ.

Օգոստոսի 15-ին տեղի ունեցավ ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդլայնված նիստը, որի օրակարգի հարցերից առաջինը վերաբերում էր ԼՂՀ մի շարք համայնքներում դրանց ղեկավարների և ավագանու անդամների հերթական ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանը: Նիստին հրավիրված էին նաև տարածքային ընտրական հանձնաժողովների նախագահները, լրագրողներ:

Բացելով նիստը՝ ԼՂՀ ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը նշեց, որ կառավարության որոշմամբ 2013թ. հոկտեմբերի 13-ին հանրապետության 11 համայնքում անց են կացվելու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Դրանք Ասկերանի շրջանի Դաշուշեն և Խնապատ, Հադրութի՝ Խանձաձոր և Նորաշեն, Մարտակերտի՝ Հովտաշեն, Ճանկաթաղ, Մեհմանա և Նոր Հայկաջուր, Մարտունու՝ Մաճկալաշեն և Վազգենաշեն, Շահումյանի՝ Հավսաթաղ և Նոր Խարխափուտ, Քաշաթաղի՝ Աղաձոր, Գողթանիկ և Վաղազին համայնքներն են: Նշված համայնքներում ՏԻՄ ընտրությունների նախապատրաստման և անցկացման համար մշակվել է միջոցառումների պլան-ժամանակացույց, որոնցից շուրջ 20-ը վերաբերում է ինչպես նախընտրական, այնպես էլ հետընտրական փուլերին: ԿԸՀ նախագահի խոսքերով՝ նշված միջոցառումների մեկնարկը կտրվի օգոստոսի 29-ին: Այս առումով ԼՂՀ ԿԸՀ-ն ակնկալում է բոլոր շահագրգիռ գերատեսչությունների ակտիվ մասնակցությունը, մասնավորապես ոստիկանության՝ ընտրացուցակների կազմման և ճշտման առումով:

Ընդհանուր առմամբ՝ 11 համայնքում անցկացվելիք ընտրությունների համար ծախսը՝ ըստ նախահաշվի, կազմել է 4մլն 1500 դրամ:

Օրակարգի երկրորդ հարցն ընտրական հանձնաժողովի անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ կազմակերպելու և անդամներին որակավորում շնորհելու կարգի սահմանման մասին էր: Ներկայացնելով այն՝ Ս. Արզումանյանն իրազեկեց, որ ուժը կորցրած է ճանաչվում ԼՂՀ ԿԸՀ 2010 թվականի հունվարի 22-ի համապատասխան որոշումը: Նա հանգամանալից ներկայացրեց նաև նոր կարգի (այն կգործի սեպտեմբերի 3-ից հետո) ընձեռած հնարավորություններն ու դրանում տեղ գտած նորությունները: ԿԸՀ նախագահի հավաստմամբ՝ նպատակը դասընթացների կազմակերպման պրակտիկայում հանդիպող որոշակի բացերի շտկումն ու գործող ընթացակարգերի կատարելագործումն է:

Օրակարգային մեկ այլ հարցի՝ ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար ԼՂՀ շրջաններում մասնագիտական դասընթացների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին տեղեկատվությամբ հանդես եկավ ԼՂՀ ԿԸՀ նախագահի տեղակալ Եղիշե Արզումանյանը: Նրա խոսքերով՝ առայսօր մասնագիտական դասընթացներ են կազմակերպվել ու անցկացվել Մարտունու և Քաշաթաղի տարածքային ընտրական հանձնաժողովներում, որոնց մասնակցել են տարածքային ընտրական հանձնաժողովների անդամներն ու այն համայնքների ներկայացուցիչները, որտեղ անց են կացվել ընտրություններ: Ընդհանուր առմամբ, այդ դասընթացներին մասնակցել է 69 քաղաքացի՝ ստանալով համապատասխան

որակավորման վկայականներ: Ներկայումս նախատեսվում է սեպտեմբերի 3-ից մասնագիտական դասընթացներ սկսել երկու փուլով, ընդ որում, այն համայնքներում, որտեղ պետք է հոկտեմբերի 13-ին անցկացվեն ՏԻՄ ընտրություններ: Այդ նպատակով տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից զգալի աշխատանք է տարվել: Ինչպես ասաց Ե. Արզումանյանը, արդեն ներկայացվել է 218 դիմում:

ԼՂՀ ԿԸՀ 2013թ. աշխատանքային պլանի համաձայն՝ Քաջաթաղի և Մարտունու տարածքային ընտրական հանձնաժողովներում փաստաթղթերի հետ տարվող աշխատանքի դրվածքի ստուգման նպատակով ԿԸՀ-ն ստուգայց էր կազմակերպել, որի արդյունքները նիստում ներկայացրեց ԼՂՀ ԿԸՀ քարտուղար Ռայա Նազարյանը: Նրա հավաստմամբ՝ կատարված աշխատանքները հիմնականում համապատասխանում են ԿԸՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Նշված երկու տարածքային ընտրական հանձնաժողովներում եղել են որոշ անճշտություններ, որոնք պարզաբանվելուց հետո վերացվել են:

Ընդհանուր առմամբ, ստուգման ընթացքում հնարավորինս վերացվել են բացթողումները, բացատրական աշխատանք է տարվել գործավարների հետ, առաջարկություններ են արվել ընտրական փաստաթղթերի վարման և պահպանման, գործավարության դրվածքի բարելավման ուղղությամբ, ասաց Ռայա Նազարյանը:

Ամփոփելով նիստի արդյունքները՝ ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը կոնկրետ հանձնարարականներ տվեց մասնակիցներին՝ ԼՂՀ շրջաններում նախատեսվող մասնագիտական

դասընթացներն ու հոկտեմբերի 13-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունների նախապատրաստական աշխատանքները կազմակերպված ու բարձր մակարդակով իրականացնելու համար:

Նիստից հետո տեղի ունեցավ խորհրդակցություն, որին մասնակցում էին տարածքային ընտրական հանձնաժողովների նախագահները:

Լաուրա ԳՐԻԳՈՐՅԱՆ

http://artsakhtert.com/arm/index.php?option=com_content&view=article&id=5470:2013-08-20-05-56-49&catid=1:2010-11-23-08-19-24&Itemid=1